ԼՈՌՎԱ ՄԱՐԶԻ ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՕԾՈՒՄԸ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՄԲ

Օգոստոսի 25-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Կաթողիկոսը, ուղեկցությամբ Վառնայի հոգևոր հովիվ Տ. Սիոն վարդապետ Ադամյանի, Անթիլիասի դպրեվանքի տեսուչ Տ. Շահան վարդապետ Սարգսյանի, Տ. Արտակ աբեղա Տիգրանյանի և Տ. Բագրատ աբեղա Գալստյանի, մեկնեց Գուգարաց թեմ՝ Լոռվա մարզի Գոգարան գյուղի վերաշորոգված եկեղեցու (Դ դար) օծման և անվանակոչության արարողությունը նախագահելու և կատարելու:

Այս աստվածահաճո գործը իրականացրել էր «Երկիր և մշակույթ» միությունը, որի անդամներն ու ներկայացուցիչները աշխարհի զանազան երկրներից, իրենց իսկ ձեռքերով ու ջանքերով և մասնակցությամբ Գոգարան գյուղի բնակչության, հողերի միջից վեր էին հանել Աստծո ևս մեկ տուն, որ մեր և պատմության ոսկե հաճգույցներից մեկն է՝ Սիլոուքի և Հայրենիքի միջև եղբայրության արտկաս յուրահատուկ խորհրդով:

Լոռվա մարզի սահմանագծին Վեհափառ Հայրապետին դիմավորեցին Գուգարաց թեմի առաջնորդ Տ. Սեպուհ վարդապետ Չուլջյանը, մարզպետ պարոն Հովհաննես Մատինյանը և մարզպետարանի այլ պաշտոնյաներ:

Մեքենաների շարասյունը բարձրացավ Գոգարան, ուր և շքախմբին դիմավորեցին Մեծի Տանն Կիլիկիո հովանավորությունը վայելող Ամերիկայի Արևելյան թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Աշճյանը, ՀՀ արտաքին գործերի նախարար պարոն Վահան Փափազյանը, Տալքի մարզպետ պարոն Պավլիկ Ասատրյանը, Գեղարքունիքի մարզպետ պարոն Վլադիմիր Մովսիսյանը, «Երկիր և մշակույթ» կազմակերպության անդամները և Գոգարանի ու շրջակա գյուղերի մեծաթիվ բնակչությունը:

Ժամը 11-ին սկսվեց օծման արարողությունը: Վեհափառ Հայրապետը սրբալույս մյուռոնով օծեց ս. Սեղանը և ս. Խորանի պատերը: Այնուհետև Մեսրոպ սրբազանը օծեց եկեղեցու 12 պսակները: Օծման արարողությունից հետո Վեհափառը եկեղեցին անվանակոչեց Ս. Աստվածածին, որից հետո էլ իր հայրական խոսքն ուղղեց ժողովրդին՝ շեշտելով Սուրբ Մյուռոնի ներքին խորհուրդը, որը երբ «դրոշմում ենք այս պատերին, քարը հոգի է դառնում, որովհետև Աստվածային Հոգով ենք պարուրում նրանց: Հետևաբար, մենք ևս հոգով փարվենք և եկեղեցին քարեղեն չենքից

անդին հոգևոր դարբնոցի վերածենք»: Վեհափառի խոսքից հետո սկսվեց Ս.Պատարագը: Պատարագիչն էր Սեպուհ վարդապետը:

Հավարտ Ս. Պատարագի եկեղեցու բակում գեղարվեստական ծրագրով հանդես եկան Գոգարանի, Վանաձորի երգի ու պարի համույթները: Ապա այս առթիվ իրենց սրտի խոսքն ասացին Սեպուհ վարդապետը, Լոռիի մարզպետ Հովհաննես Մատինյանը, Վանաձորի քաղաքապետ Անդրանիկ Հարությունյանը, «Երկիր և մշակույթ» կազմակերպության նախագահ Գեղամ Գևորգյանը և ուրիշներ:

Վերջում բազմահազար ժողովրդին իր հայրական օրհնությունը տվեց Վեհափառ Հայրապետը:

ՏԻԳՐԱՆ ՍՐԿ. ՍԱՆՈՍՅԱՆ